

ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
 Ե. ԲՈՒՐՈՍՅԱՆ
 Կամակ կամ որ եւ է
 Կրթական Գործերի Կոմիտեի
 Տնօրէն Ա. ԲՇԱՒԱՆՅԱՆ յարգելի
 ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

ԱՐՄԱՆԱՅՍ

ԲԱՍՄԱՆՈՐԴԱԳՐԱԹԻՒՆ
 ԵՂԻՊՏՈՍ ԶԱՐԴԻՐ
 Տարեկան ուր դասիկ 80
 Կեցանական 85
 ԱՏԱԵ ԵՐԿՐՈՐԴ
 Տարեկան 20
 Կեցանական 12

E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
 ARCHALOUYCE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՐԱՐԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

Աւագ Շարաթու և Զատիկ տօներուն պատճառաւ առաջիկայ ՇԱՐԱԹ ԵՒ ԶՈՐԵՔՇԱԲԻ « Արշալոյս » չը պիտի հրատարակուի :
 Թերթիս Տնօրէնը վաղը Աղէքսանդրիա կը մեկնի, բանակցութիւններ կատարելու համար՝ առաջիկայ ԵՐՐՈՐԴ շրջանի նկիզբէն « Արշալոյս » ի մէջ ըլլալիւք բարեփոխմանց և անոր պարզացման ու յունալիզմութեան նպատառով ինչ ինչ կործանող լինողոց նկատմամբ :

ԿԱՅՈՐՈՒԹԻՒՆ ՍԸ ՈՐ

ԿԸ ՓԼԶԻ

(Շարժ. Ընտանոց թիւէն եւ վերջ)

Փրանսուա Ֆերտինանտ երբ օր մը Լինձի պահակագունդին մաս կը կազմէր, առատ ճաշէ մը յետոյ, ձի հեծաւ և մէկ քանի սպանիւրէ հետեւորդացած սկսաւ գաշտերուն մէջէն քառասուրակ արշաւել :

Ճամբան դադարի մը հանդիպեցաւ, զոր չորս գիւղացի ուսերուն վրայ բարձած կը տանէին. իշխանը դադարը գետինը դնելու տուաւ, և հոն մեռելին ընտանիքին ներկայութեանը, դադարին վրայ սոսկալի ուղղահիւղ ձիարշաւ մը կատարեց :

Լինձի եպիսկոպոսը փութաց կայսեր գանդատելու. Կայսրը կանչեց իր եղբորորդին, զայն ապրակեց և հրամայեց անոր 2,000 Ֆրանկի տուգանք մը վճարել նախատուած ընտանիքին և իբր պատիժ իր ըրած ամբարշտութեան, 12 ամիս արքունիքը դռք չի կոխել :

Սթոն Արհիպիսկոպոսը իր կարգին՝ ճիշդ իր անդրանիկ եղբորը հետքերուն վրայէն քալած է. անոր վրայ յետագայ դէպքը կը պատմուի :

Իրիկուն մը ընթրիքէն յետոյ իր գունդէն մէկ քանի սպաներու ընկերակցութեամբ քանի իր կնոջը Մարի Ժոզէֆ իշխանուհիին քնացած սենեակը կը մտնէ և կ'ստիպէ անոր որ իրեն թէյ մը հրամայնէ : Պահակագունդին հրամանատարը եղելու թիւնը իմանալով՝ Արհիպիսկոպոսը և անոր հետեւորդը սպաներուն պարսաւանք մը կ'ուղղէ : Սթոն այս մասին կայսեր կը բողբէ :

բայց Փրանսուա Ժոզէֆ զօրավարին իրաւունք կուտայ : Ասոր վրայ Սթոն զօրանոցին սեղանատունը ճաշած միջոցին, հոն դրանոց կայսեր կիսարձանին վրայ պնակով շալին կը թափէ. կայսրը ճիշտ անոր եղբորը ըրածին պէս վարուեցաւ. զայն ապրակեց և արքունիքէն վաճառեց :

Ասանք են ահա այն երկու իշխանները որոց ուսերուն վրայ պիտի ծանրանայ քիչ օրէն հապապօրէններու վեհապետութիւնը :

Եւ հիմա որ կը ճանչնանք այն նաւուղիները, որոնց պիտի վստահուի Աւստրո-Հունգարական նաւը, այն օրը որ Փրանսուա Ժոզէֆ պիտի դադրի ապրելէ. տակաւին պահ մը աչքերնիդ հսկայ սառնալեռներուն վրայ նետեցէք որք ձեռնամուսուլի մը պէս կը պրկին այդ նաւը, և որ զոյժն առաջին նշանին պիտի փշրեն. շնորհէք այդ ախիւրար ատող ազգաց սարսափելի աղաղակները — Հունգարացի, Չէկ, Թրանսիլվանացի, Գերմանացի, Սլաւ — որք միշտ զիրար ատած են՝ և միշտ իրարու հետ այնպէս եղած են ինչպէս շուրջ կրկնին, փետուրը երկաթին և արեւը ստալին հետ :

Պահ մը մտքով երեւակայեցէք Գերմանիան ձր թեւաբաց իր դիրկը կ'ընդունի Ծ-9 միլիոն գերմաններ : Գերմանիան իրեն կըցած բոլոր Իրէսիսի և Լիւիւսայի թագաւորութիւնները, Գերմանիան իր թագին աւելցուցած նոր ծաղիկ (fleuron) մը որ թագի մը խոշորութիւնը ունի :

Երեւակայեցէք Ռուսը որ ահագին սիփոնի մը պէս պիտի ծծէ Սլաւ արարները և իր իշխանութիւնը Իստուրի կանաչազորագիւրդէն մինչև Սալի ամալի ափերը պիտի տարածէ :

Երեւակայեցէք Իտալիան, որ Ազրիականի ծովային շրջանակը բոլորելով մինչև Իտալիան սահմաններուն մէջ խրուած պիտի ըլլայ :

Երեւակայեցէք Լիւիւրութեան իշխանութիւններ և Ռումանիան, Պուլկարիան, Մօնթէնէկրօն, բոլորը պատրաստ՝ որսամասին վրայ վազելու, իրարու մէջ բաժնելու համար մէկ քանի գաւառներու բեկորներ և մէկ քանի նահանգներու ոսկորներ :

Երեւակայեցէք տասնեակ մը պետութեանց հրէշային արալին. երեւակայեցէք կայսրութեան մը սարսափելի յօշուած ամբողջ և բոլորական ցամաքէն. երեւակայեցէք ակուաններու կճրտումները անոնց, որք չ'պիտի կրնան բաւական մաս մը խլել կործանուած պետութիւնէն. և յաղթանակի

ստեղծները անոնց, որ մեծկակ բաժին պիտի ստանան. երեւակայեցէք երկրագունդի մը դրդողութիւն մեղրակիտի անոնց՝ մասին տասնութ մը :

ՍԻՒՆՅԱՆ ԸՈՉԱՆ

ԱՌՈՂՁԱՄԱԶԱԿԱՆ

ՍՆՈՒՆԴ

Արդիկ առօրեայ աշխատութեան անպատճառ ուժը վերստանալու եւ անկու համար կանոնաւոր սնունդի պէտքն ունիլն :
 Հետ Գոմէզի եւ ուրիշ գիտնականաց արդիկային պարմոնոյն կազմութիւնը պարսպին բազարութիւն մը ըլլալուն պիտի քաջապէս պէտք ունի Գոմէզի Ժաֆօֆիսթի :

Ուստի շատ մը գիտնականներ ի վաղուց հետէ իբր ամենէն յարմար եւ կատարելագործ ընդունած են կենդանեաց միսը :

Արդարեւ ո՞չ ապաքէն քաղաքակիրթ ազգաց մէջ ամենայնոցին գործաւորէն զետեղ ծամենէն գիւրակեցիկներուն ճօխ զեղաններուն վրայ ստեղծ տեսակ կենդանեաց միսն է որ կարելի որ տեղ մը կը գրաւէ :

Չէ՞ մի որ քիչ մը երբ հեւանիկ մը քով հրաւիրուի, պէտք եղած դեղքը ու պատճենները առէ վերջը քիչ մը ստեղծ կ'առաջարկէ մտնողէն առնուլ անշուշտ հինոց ի վեր ընդունուած սովորութեան մը համակերպելով :

Իսկ մենք սովորական մանկանացուք երբ հացկերոյթի մը հրաւիրուինք և ինչ կը գտնենք սեղանին վրայ. ո՞չ ապաքէն խորոված հաւեր. սեսակ սեսակ համադամ խորովիներ որոնք մէկը մէկ կը շաղորդեն ամբողջական իրարմէն :

Աստիցմէ վերջը կուգայ բանջարեղէն մը — այն ալ համեստ սեղաններու վրայ — որուն երեսն անգամ չեն նայիր՝ արդէն յագեցած ըլլալով մտնողին կերակուրներէն :

Կան շատեր մասնաւորապէս որ կ'ընեն եղածին չափ քիչ քանակութեամբ հոց կ'ունեն ուս համարմամբ թէ հոցը պէտք եղած սնունդը չ'աւորուեալիք, ուստի պէտք չէ անով ստամոքսը լեցնել :

Սակայն գիտութիւնը այսօր բոլորովին տարբեր վճիռ կ'արձակէ՝ ընդհանուր համոզումը եւ սովորութիւնը վեր ի վայր յեղաշրջելով : Եւ ասիկայ տարիներու երկար շրջանին մէջ գիտական մասնակրկիտ քննութիւններ եւ փորձեր կատարուելէ վերջն է որ սեղի կ'ունենայ : Մէկ խօսքով, գիտութիւնը վճարական կերպով կը դատապարտէ շարունակ մտակերութիւնը ոչ միայն իբր պատճառ մարտոզական գործարանաց տկարացման, այլեւ շտրման իր ժամանակ (գարմիտ) հիւանդութեան եւ որ (ստակերութիւնը) շրջանի գրաւիման վրայ գէշ կերպով կը ներգործէ՝ մասնաւորապէս կ'իմաններու մէջ : Որովայնի պնդութիւն, բերնի գարշահոտութիւն, մորթային հիւանդութիւնք չափազանց

մասկերութեան ամենէն սովորական հետեւանք-
ներն են :

Անշուշտ պիտի առարկուի թէ մտեղէն կե-
րակութեանը քանի որ այդքան ֆիսիոլոգիայէն
ուրեմի ինչ ունելու է մարդս մտնի պարունա-
կած սնունդը ստանալու համար :

Ահա կարեւոր կէտն : Մինչեւ մօտ ժամա-
նակներս անանկ կը կարծուէր թէ կենդանեաց
միւր ամենէն շատ ազօրային, նարայային նիւ-
թեր, ֆօսֆօր և երկաթ են : կը պարունակէ :
Սակայն այս կարծիքը դիտակահանքէն սխալ է
բոլորովին : Ահա արդեւնքը :

Քիմիագիտութիւնը՝ ըրած հակայաքայլ յա-
ռաջգրութեան շնորհիւ՝ այսօր անվիճելի կերպով
հաստատած է թէ լաւագոյն տեսակէ միւր 16-
18 0/0 ազօրային նիւթ կը պարունակէ : Մինչ-
դեռ բուսեղէնք 25-30 0/0 ազօր կը պարունա-
կեն որով այս վերջինները մտնի աւելի անհա-
րար են : և որք ուրիշ առաւելութիւն մ'ալ ու-
նին այսինքն ամենէն սկար ստամոքսներուն
համար ալ դիւրամարսելի և ամենէն համեստ
քրտակներուն համար դիւրատար են :

Հստակ աւելի պարզ կերպով հասկցուե-
լու համար օրինակով բացատրենք : կէս քիլո-
կրամ լուբիան, ոսպը, բակլան են : 1 քիլո և
80 կրամ եզան մտնի չափ ազօրային նիւթ կը
պարունակեն : Ահա այսպէս աղքատին սովորա-
կան ու սիրական լուբիան շատ աւելի սնունդ
կը պարունակէ քան հաւասար քանակութեամբ
միւր :

Փառով մտնի պարունակած միւս սնուցիչ
գլխաւոր նիւթերուն որք են : ֆօսֆօր, երկաթ,
բնածուխ, նարայ եւն : ևն : ասոնցմէ ևս առատ
քանակութեամբ կը գտնուին բուսեղինաց մէջ :
Օրինակի համար, առնենք հաւը, բազը, ա-
ղանին : հորթի, ոչխարի, եղի եւ խոզի միւրը
Ասոնք 0, 35 սանթիկրամէն մինչ 0, 50 սանթի-
կամ առ հարիւր համեմատութեամբ ֆօսֆօր կը
կը պարունակեն, իսկ բուսեղիններէն : լուբիան
բակլան, սիսիւր, դիւղը, ուրունը, բրինձը, ոս-
պը, ցորենը, եգիպտացորենը, բաթաթէսը,
աղին, ալուրը, շօգուան են : ևն : 0, 02 սան-
թիկրամէն մինչեւ 1 կրամ և 0, 15 սանթիկրամ
առ հարիւր ֆօսֆօր կը պարունակեն, որք մը-
կանանց, զնդերաց, սակորներու պէտք ևղած
ուժը կուտան և իրենց բազազրութեանց մէջ ալ
կան արդէն :

Վերոյիշեալ զանազան տեսակ կենդանեաց
մտնի և արիւնին մէջ գտնուած երկաթի (oxyde
de fer) քանակութիւնը 0, 02 սանթիկրամէն
մինչեւ 0, 72 սանթիկրամ առ հարիւր, սակայն
վերոյիշեալ բուսեղինաց մէջ 0, 02 սանթիկրամէն
մինչեւ 2, 0 կրամ առ հարիւր համեմատութեամբ :

Փառով բնածուխի ու նարայային նիւթերու
քանակութեան : բուսեղէնք մտեղէններուն կըր-
կինը կը պարունակեն : Աւրեմն յայտն ևս առա-
ւելութիւնը բուսեղինաց կողմն է :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐԸ

Տօքթէօն ձօրիս - Ապրահամ Սնուորօ, որ
Միացեալ Նահանգաց Բիկիմաուն քաղաքը կը բը-
նակէր, 55 տարեկանին հասած էր և սակայն
իւր ազգականներէն և կամ բարեկամներէն ևս
ոչ մին կարողացած էր զայն համոզել ամուսնա-
նալու համար :

Անցեալ տարի ծնունդէն մէկ քանի օր ա-
ռաջ 37 րդ Սքուէրի մէկ մեծ խանութը մաս-
ծնորհան նուէրներ գնելու համար :

Տօքթէօնին ծառայողը խոշոր, չէկ աղջիկ
մըն էր և այնչափ սիրուն, այնչափ պաշտելի
էր որ տօքթէօրը իր կեանքին մէջ առաջին յու-
զուժը զգաց : Հաշուեհաղանէն անմիջապէս հաս-
կըցաւ աղջկան անունը. — Միս Պէրթա :

Տօքթէօրը հարցուց Միս Պէրթային թէ՛
կուզէ՞ր իրեն հետ ամուսնանալ : Միս Պէրթա
պատասխանեց թէ՛ ընտանաբար կուզէր :

Այս խօսակցութենէն 15 օր յետոյ հրապու-
րիչ Միս Պէրթան գեղանի Տիկին Սնուորօ կը
գառնար :

Կ'եղրակահոնք ուրեմն խօսքերն յայ-
տարարելով թէ բանջարեղէնք, արմտիք, պը-
տուղները, ձկնիկ, կաթը, մածուց, պանիրը,
կարկիլը, հաւիկիլը ևս մեղր ևս մեղր սննդաբար
ևս գիւրամարս են քան թէ մտեղէնք, մտեղէն-
ներուն և բանջարեղէններուն սննդարարու-
թեան մասին այնչափ ինչ ըսելէ յետոյ, քիչ
մ'ալ խօսինք այն վնասներուն ևս հիւանդու-
թեանց վրայ զորս մտեղէնք կը պատճառեն մար-
դուս ներքին գործարաններուն վրայ :

Բօլպէթթ, Պուշարտա, Տիւ ժարտէն Պօմէց՝
աշխարհածանօթ գիտնները իրենց հեղինակած
սննդաբանութեան գրքերուն մէջ ըսած են թէ մը-
կանունքներու ևս զնդերաց սպասած ուժը վիս-
տանալու համար պէտք է բուսեղէն կերակու-
ներ ուտել ոչ թէ մտեղէն :

(Շարունակելի) ՀԱՅԿ

Տ Ի Ր Ո Ւ Ն Ի

Աղէքսանդրիայ զգայիններէն հանրա-
ծանօթ վաճառական Տիարք Եղարք Կամ-
սարական, ամուսն 6 ին զժառգութիւնը
ունեցած են ողբալու իրենց սիրեցեալ մօր

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՆՆԻԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ

ցաւալի մահը :
Ինչպէս կը տեղեկանանք հանդուցեալ
Տիկինը՝ ոչ միայն որդեսիրութեան տիպար
մը եղած է, այլ և՛ իր աղքատասիրու-
թեամբ և բարեգործութիւններով, շատ
մը խեղճերու աչքերէն հոտող արտասուք-
ները քրքած և միխթարած է զանոնք :

«Արշալոյս» ի Խմբագրութիւնը այս-
պիսի վշտառիթ և անգարմանքի կորստ-
եան մը առթիւ, իր ցաւակցական արտա-
յայտութիւնները ներկայացնել կը փութայ
աղին : Կամսարական Եղարք և անոնց սը-
ղակիր ազգականաց :

ԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Զատկի առթիւ, յորում մահուան
գատապարտուած աշխարհի մը վերստին
կեանք պարզեւելու համար ինքնագոհ Աս-
տուծոյ մը սքանչելահրաշ յարութիւնը կը
տօնուի, անտարակոյս Սրբազան Առաջնորդ
Հայրն է որ Ս. Պատարագ պիտի մատու-
ցանէ, և հոգեշունչ քարոզով մը՝ իր հօ-
տին մատնանիչ պիտի ընէ քրիստոնէսու-

Հակառակ իր 55 տարեկանին Տօքթ. Սը-
նուորօ դեռ բացարձակապէս ներկայանալի ա-
մուսին մըն էր : Իր գեղեցիկ արծաթագօծ մա-
զերը կը շքանակէին սիրուն գէմքը որ միշտ
մեծ խնամքով ամբուլուած էր :

Տօքթէօրը իր մանկամարդ կնոջը համար
խենդ կըլլար : ամենամանր խնամքներն անգամ
չ'անասեւելով, միշտ ամենայուզիչ գորովով ու
խանդով անոր ծառայելու պատրաստ էր :

Բայց սակայն հարսնիքին իրեկունը անոր
ըսած էր սոսկալի հանգարտութեամբ մը :

— Պէրթա՛. եթէ երբէք զիս խաբես, այն-
պէս մ'ըրէ որ երբէք սեղեկութիւն չունենամ :
Եւ աւելցուցած էր :

— Կու աղէկութեանը համար կ'ըսեմ :

Տօքթէօն Սնուորօ շատ մը Ամերիկացի բը-
ժիշկներու պէս իր քովը կը պահէր բժիշկ-աշ-
կերս մը որ իր բժշկական խորհրդակցութեանց
ներկայ կըլլար և իր այցելութեանցը կ'ընկե-
րանար. սքանչելի գործնական միջոց մը որ
կարժէ ֆրանսայի մէջ ալ գործարարել, որով թե-
րեւ կարելի կ'ըլլայ մեր հրիտասարդ բժիշկ-
ներու մեռելաթիւը նուազեցնել :

Պ. Սնուորօի աշակերտը Տօքթ. Արթիւրըն
որ 20 ամեայ գեղեցիկ երիտասարդ մըն էր,

թեան, այսինքն՝ անխառն զուգութի, սիրոյ,
ինքնամոռացութեան և անձուիրութեան
կրօնքին պահանջներուն գործադրութեան
արդէն բացարձակ-եղանակները :

Արդ կը հայցեմ՝ նորին Սրբազնութե-
նէն որ թէ՛ իր քարոզին միջոցին և թէ՛ Ս.
Պատարագի միջոցին երբ Սարկաւագը՝ ա-
ւետաբեր ցնծութեամբ՝ կ'երգէ «Ազատու-
թիւն եղարց մերոց գերեցոյց» կը պաղա-
տում որ՝ այդ միջոցին՝ նորին Սրբազնու-
թիւնը — խոկալով իր նոյնժամեայ խոր-
հրգաւորապէս ներկայացուցած մեծ ողբեր-
գութեան խոցստեալ անհուն Պաշտօնակա-
տարին վրայ — յիշէ մեր այն գերեալ եղ-
բայրը, որ տարիներէ ի վեր — եթէ ո՛չ իբր
իրաւունք, գէթ իբր հովուական բարեխօ-
սութեան շնորհ — իր ազատութիւնը կ'ըս-
պասէ եգիպտական բանտերու մէջ, և ու-
րուն մահամեծ վիճակը արդէն իրեն ծա-
նօթ է :

Անշուշտ եգիպտացի Հայութիւնը
հասկցաւ թէ կ'ակնարկեմ անոր որ կախա-
լանէն ազատեցաւ և որ ունի կին մը վըշ-
տատանջ և փոքրահասակ զաւակներ աղեք-
սարկու : Սրբազան Առաջնորդ Հայրը կրնայ
վստահ ըլլալ որ այս ձայնը «ձայն բազ-
մաց» է :

Կան պարագաներ — ներկայն ալ մին
է անոնցմէ — որ աշխարհական դասակար-
գը բացարձակ անկարողութեան կը մատնը-
ուի — գէթ ուղղակի գործակցելու համար-
Բայց կրօնաւորը միշտ իր առանձնաշնոր-
հումները ունի, որոնք աւելի հարկադրիչ
կ'ընեն իր նուիրական պարտականութիւն-
ները իբր և տիպար-աշակերտ առատագուրթ
Աստուծոյ :

Գլխութիւն ուրեմն :

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պէրլին 4 ապրիլ. — Օսմանեան կա-
ռավարութեան պատգամաւորը Իսկէն պէյ
հաս հասած է քանի մը օրէ ի վեր, և բա-
նակցութեան մտած է մեծաքանակ ազգմա-
մթերքի գնման համար :

Կ. Պոլիս 5 ապրիլ. — Խոռովութիւնք
ծագած են. յեղափոխութիւնը Հրէից գէմ

բժիշկին մէկ հին բարեկամներէն միուն տղան
էր, տօքթէօրը զայն իր բուն զաւակն պէս կը
սիրէր :

Երիտասարդը անտարբեր չ'մնաց Միս Պէր-
թայի գեղեցիկութեանը բայց իբր պարկեշտ աը-
ղայ մը իր սիրոյ զգացումը մինչեւ սրտին խո-
րը մղեց և ուսմանց մէջ թաղուեցաւ իր միտ-
քը զբաղեցնելու և հրապուրիչ տիկնոջ գեղե-
ցիկ պատկերը մոռնալու համար :

Պէրթա ալ իր կողմէն ձօրճը անմիջապէս
սիրած էր բայց իբր հաւատարիմ ամուսին ու-
զած էր սպասել որ առաջ ձօրճ իր սիրար բա-
նար :

Այս վարմունքը բնականաբար շատ երկար
չէր կրնար տևել. օրին մէկը ձօրճ և Պէրթա
ինքզինքներն իրարու գիրկը գտան :

ձօրճ ամօթանար իր տկարութեանէն ալ կը-
րում ըրաւ անգամ մըն ալ չ'սկսելու, բայց
Պէրթա անոր հակառակը երդուած էր :

Երիտասարդը անկէց կը փախէր, Նէ սն-
սահման սիրով տողորուած միշտ նամակներ կը
գրէր :

« . . . Միշտ քեզի հետ ըլլայի. իբարմէ
կըրէք չ'զատուէինք. մեր երկու հոգիները մէկ
մարմին կազմէին. . . »

է, ստիկանութիւնը միջամտած է. վերաւորեալներ կան :

Կառավարական շրջանակներու մէջ այն համայնքը կը տիրէ թէ Պուլկար կառավարութեան Մակեդոնական գոմիթէին լուծման համար ըրած ապահովական խօսքերը շատ ցնորական են, եթէ նոյն իսկ պլէնդումի այդ գոմիթէին լուծման, գոմիթէին կրնայ ուրիշ անուան մը տակ կրկին գործել :

Սէլանիկ 5 ապրիլ. — Հակառակ Օսմանեան իշխանութեանց գործունէութեան Մակեդոնիոյ մէջ կեդրոնական գոմիթէին գործողութիւնները գաղթած չեն և աւազակախումբեր կը գործեն վիլայէթին զանազան գաւառակներուն մէջ : Ուրիշ կողմէ թուրք զինուորները ամեն օր անխտիր բռնութիւններ կը գործեն Պուլկարոց դէմ :

Կացութիւնը ընդհանուր առմամբ բարելաւուած չէ :

Կ. Պօլիս 5 Ապրիլ. — Պայրամի առթիւ Պալատին մէջ եղած ընդունելութեան միջոցին երկրաշարժ մը պատահած է որ ունկնդրութեան սրահի ձեղունին գաճերը թափած է : Ընդհանուր սարսափ մը տիրած է բայց Սուլթանը իր բոլոր պալատիւնները պահած և հրամայած է ընդունելութիւնը շարունակել : Կիլեօմ կայսրը այս լուրը իմանալուն պէս Սուլթանին շատ նշանաւոր հեռագիր մը զրկած է որուն մէջ սուլթանը կը չնորհաւորէ նախախնամութեան բացայայտ միջամտութեամբ իր թանկագին () օրերը պահպանուելուն համար : այդ հեռագրին մէջ կայսրը երկինք կը բարձրացնէ սուլթանին քաջութիւնը :

(Ինչ բանի համար արդեօք) :

Ս. Բէթէրսպուրկ 5 ապրիլ. — Սպայ մը փորձած է ջարդ սպաննել : Իր փորձին մէջ չ'յաջողելով՝ անձնասպան եղած է :

Սէլանիկ 8 ապրիլ. — Հակառակ բոլոր հերքումներուն, Մակեդոնիոյ մէջ Օսմանեան զօրաց համախմբումը մեծ եռանդով կը շարունակուի. կը կարծուի թէ այդ նահանգը գտնուող թիւրք զօրաց թիւը 90000 ի կը հասնի :

Սօֆիա 9 ապրիլ. — Խռովարար Սարաֆօֆ ազատ արձակուեցաւ :

Այն նամակը՝ ուր այս հտտուածները կը բացվառէին, Տօքթօրին ձեռքը ինկաւ՝ որն ու միայն հետեւեալ բառերը մընջելով բաւականացաւ :

« Եստ զիւրին ըլլալիք բան մ'է . . . » Միեւնոյն իրիկունը Հուլայթ-օֆ-Բարբի մէջ ճաշեցին. տարիկայ Տօքթօրին մէկ ստացուածքն էր, Բիկթաունի մօտ :

Ճաշի միջոցին տարբերակ, անյաղթելի թմրութիւն մը տիրեց երկու սիրահարներուն վրայ :

Հսկայածե սեւամորթ ձօնի օգնութեամբ, որ գերեաց պատերազմէն ի վեր Տօքթօրին ծառայութեանը մտած էր, Սնտորօր յանցաւորները հանուեցուց, միեւնոյն անկողին մէջ գանձաբազուկեց և անոնց ազգագրութիւնը ամբողջացուց իր հնարած մէկ բնածխաւոր ջրածնին շնորհիւ :

Տօքթօրը իր վերաբուժական գործիները պատրաստեց այսպիսի հանգարտութեամբ մը որ կարծես թէ չիւսացի մը ուսքին կոշար պիտի կտրէր :

Ապա ճշմարտապէս հիանալի ճարտիկութեամբ մը իր կնոջ աջ թեւը և աջ սրունքը յօդատելով կարեց : Ճիշտ միեւնոյն գործողութեամբ ալ ձօրձին ձախ թեւը և ձախ սրունքը հանեց :

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

ՈՐՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՊատ. Գործ. Ժողովէն հետեւեալ նուիրատուութեան ցանկը ստացած ենք ի հրատարակութիւն :

Որբասիրաց Ընկերութիւնս իր վաւերացեալ կանոնադրի տպագրեալ օրինակներէն թէ՛ Եգիպտոս և թէ՛ Արատասհման գտնուող ազգայիններու զրկած լինելով, անոնց փոխարէն ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները :

Ա. Գանտիարնակ (Կրէտէ) ազգայիններէն (Տես «Արշալոյս» թիւ 160) 135 Գ. Ո.

Բ. Ի գահիրէ երեք բարեսիրտ Տիկիններէ (Տես «Արշալոյս» թիւ 166) 212 1/2 »

Ազնուափայլ Տիկին Նարգուհի Փ. Եագուպեանէ 77 1/2 »

Տիար Աբրահամ Մարգրիտեանէ 25 »

Արժ. Տ. Եղնիկ Քհնյ. Պալուրիէ 20 »

Ոմն Ժամագործ 5 »

Համագումարն է 475 30 փ.

Իսկ Տիար Աբգար Տէր Յարութիւնեան ի Տամիթ, ներկայ ամսոյս 1 էն սկսեալ երկու բաժնի համար բաժանորդագրուած և եռամսեայ վճարումն ալ, 30 զրջ. ողջ, զըրկած է նամակաւ մը :

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան

Գանձագետ Ատենագետ Կ. ԵՐՁԵԿԱՅԵԱՆ Ա. Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Այսօրուան Հէլուանի թիւերուն մէջ սխալներ սպրդած ըլլալով՝ կը յանձնարարենք թիւ ունեցողներուն որպէսզի ճշգրէն վերջ միայն պատուեն :

ՀԻՆ ԳԻՄՊԵՐ

ՈՒՒՏԱԳՆԱՅՆ ԱՐԱՂԱՍ ԱՅՎԱԶԵԱՆ ԵՒ Ս. ՏԷԼԷԿԵԱՆ

Հետեւեալ նամակը պատահմամբ մեր ձեռքն անցած ըլլալով, հին բարեկամներու տեսակցութեան և թղթակցութեան վերայ գաղափար մը տուած ըլլալու համար կը հրատարակենք, Մանաւանդ երբ անոր հեղինակն է յաւելու ուխտագնացն Ա. Այվազեան :

Պէրթայի աջ կողին ամբողջ երկայնութեանը վրայ և ձօրձի ձախ կողին ամբողջ երկայնութեանը վրայ երեք բթամատ լայնութեամբ մորթը կտրատելով վերցուց :

Ապա երկու մարմինները իրարու մօտեցրնելով, այնպէս մը որ երկու նոր բացուած վէրքերը բերան բերնի գային, զանոնք իրարու հետ լաւ մը կապեց շնորհիւ երկուր զօտի մը որ հարկեր անգամ երկասարգներուն մարմին շրջանը ըրաւ :

Ամբողջ գործողութեանը միջոցին ո՛չ Պէրթան և ո՛չ ալ ձօրձ շարժում մը ըրած էին :

Տօքթօրը լաւ մը ապահով ըլլալէ յետոյ թէ երկու յանցաւորները աղէկ կացութեան մը մէջ էին, կողորդային մտածակով մը անոնց ընտիր արգանակ և պատուական Պօրտօի հին գինի խմցուց :

Ճարտարօրէն տրուած թմրեցուցիչ դեղով մըն ալ գանձը 15 օրի չափ այդպէս թմրած վիճակի մէջ պահեց, տասնեվեցերորդ օրը Տօքթօրը հաստասեց թէ ամեն բան կարգին էր :

Ուսերուն և ազդերուն վէրքերը սպիացած էին. գալով երկու կողերուն՝ անոնք մէկ գանգուած, մէկ մարմին կը կազմէին :

Այն ատեն Տօքթօրին աչքերուն մէջէն յաղթութեան փայլակ մը անցաւ և թմրեցուցիչ դեղը գաղբեցուց :

Առ

Ազգային մեծ ուսուցիչն ու Մեծ-Երգի Գերդողն Տիար Սիմոն Ֆէլէկեան

Աղէքսանդրիա

Գրագէտ Բարեկամ :

Յորմէհեաէ Մուսիաներու ու Բուրգերու աշխարհքին մէջ, Ֆէլլահներու և Մէմլուքներու կենակից, փարաւոնեան սրահներու, Լուքսորեան ապարանքներու բնակիչ, կողորդիտներու այցելու, Արամազդապարգև Նոդոսին ուխտագնաց եղեր ևս, ա՛լ բոլորովին մոռցած ևս բարեկամներդ, պարարտ եօթն եզներու և եօթն յուսիսի ու ատոք հասկերու ամաց լիութեան մէջ յօրանալով ու լողալով, բարեկամներդ որք հոս ազագուն ոսնած հասկեր փշաքաղելու, վտիտ եղներ ծծելու, քշելու վարկպարագի տուայտանքովը և գառն հարուածներու Դամոկլեաններուն տակ քրտինք կը հոսեն և արիւն կը փսխեն. Թէև կան ալ հո՛ր՝ որ իրենց սահարաններուն մէջ հրէից կերած սոխին ու սըխտորին կարօտը քաշեն դեռ չ'մտած իրենց Գանանը :

Հիւքսոսներու ու Ջալիւքէնիլու կամ կըղեսպատրէի երկրին մէջ, լի՛ր Յովսէփը՝ իւր եղբայրները պաշարապինդ զօրացնող և իր ցեղակիցները պաշտպանող, Նեզոսի ջուրը՝ Լէթէի աղբիւր, և արմաւենիները՝ Լուղաս չի համարիս, որ յիշողութեանդ ու երեւակայութեանդ մէջ անցեալին մոռացօնքը կաթին ու բուսնին Տաճարի ձերուսնոյն անունը աօնելու փամանակըն անցաւ : Սակայն դու՛ն, Գործերու տաճարներու երկրին մէջ սպրէ ու սպասէ այնքան, որքան սպրեցաւ ու սպասեց անուանակից ձերուսնին և չի գրկած Մէսիան՝ չ'արտասանեց «Արդ արձակեան» : Անուանակցիդ կեանքովըն սպրիս, Պողոմէսներու ոստանին մէջ եօթնասանից մին միսս, պապիրոսներու վրայ, նոր մազաղաթներու վրայ մովսիսապատումներ արձանագրես :

Յառաջիկայ նոր ուխտագնացութեանս ատեն բերանացի պիտի չնորհաւորեմ եղիպական գաղթականիդ կեանքի նոր շրջանը, անձամբ գրկելով նահապետական բարեկամս, որ այնքան գրկեցէ և այնքան սէրերէ վտարանդի, բազդի ու կեանքի հողմովը կ'օգտվարէ իւր Պէգասը :

Եթէ ճերմկած են մազերդ, քնարիդ թեւերդ՝ սմբած չ'են, և սիրտդ ձիւն չ'ուսի, Բանաստեղծը կ'աւելորի, բայց չի ձերանար : Պատեսայ գաղաթը կ'իջնէ ձմեռը, բայց ստորտը՝ գարունն իր ծաղկագործը փռած է միշտ : Լալա՛ կնոջ, երգելը՝ բանաստեղծին բաժինն է, Եփրատ :

Ճիշտ միեւնոյն փամանակէն արթնանալով ձօրձ և Պէրթա կարծեցին թէ անուրի մղձաւանջի մը խաղալիկ եղած էին. բայց շատ սարսափելի տեսարան մը եղաւ երբ ստուգեցին թէ եղածը երազ մը չէր, այլ սոսկալի իրականութիւն մը : Տօքթօրը չէր կրնար իր Ժպիտը զսպել այս տեսարանին վրայ : Գալով սեւամորթ ձօնի՛ անիկայ Տօքթօրին հոտելը կանգնած ապուշ ապուշ կը դիտէր : Պէրթա մանաւանդ կատաղի բորենիի ոտնուսներ կ'արձակէր :

— Ինչո՞ւ կը գանգատիք, սիրելի բարեկամուհիս, ընդմիջեց քաղցրութեամբ Սնտորօր, և միայն ձեր ամենասիրելի բաղձանքը կատարեցի. չէի՞ք ըսեր « միշտ քեզի հետ ըլլալի. իբարմէ երբէք չ'զատուէինք. մեր երկու հոգիները մէկ մարմին կազմէին . . . »

և նրբօրէն Ժպտելով Տօքթօրը աւելցուց :

— Ահաւասիկ ինչ որ Քրիստոսայինըրը միացում (Collage) կանուանեն :

ԱԼՖՕՆՍ ԱԼԼԷ Թրգ. ԼԵՒՈՆ

սայ ուսմանը կ'ախուսած տաւիղներն ինչպէս երբեմն երբայցիք վար առնելով զՆոյն վարձը...

Դափնիներու վրայ մի քանոսք : Երգելն՝ սփռուել է : Բանաստեղծին սիրով՝ հրաբուխն է :

Բոլոր բարեկամներդ զքեզ սիրով կարօտով էլ բարևեն, եւ շատերն զքեզ մեռած լսելով, երբ իրենց անձամբ պատմեցի Ձեր յեզրագոտ...

Ընկալ՝ ապա, ո՛ր ազնիւ տաղանդաւոր ու վաստակաւոր բարեկամս, զուխս, զսոցաչանս իմ, զողջոյն իմ, զսէր եւ զկարօտ ի հաճոյս քու...

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ 6 Մարտ 1901 Կ. Պոլիս (Դուրդարու-Հիտար տպար)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ԿԼՈՒԿԱԾ ԿԻՆԵՐ : Կիներու վերարկուի նորոյթը manteau-sacn է ուր կը կորսուի կնոյ հասակը...

Երկու բոյներ, Մառի և Մաթիլդա Անն ինքն իր, որք Բարիզ վիէյ-տի-Ռոմբլը փուլոցը կը բնակէին, բաւական ժամանակէ ի վեր արդեատով զողովիւն կ'ընէին մեծ խանութներու մէջէն...

Խանութներէն ներս նիհար կը մանկին ու գէր գուրս կ'ելլէին : Այդ տարօրինակութիւնը մէկ քանի սաստիկաններու աչքէն վրիպած էր...

Երկուքն ալ ոստիկանական գովեստին բովը առաջնորդուեցան, որ բանալ տրուուտ ատեն վերաբլակ-առաքակները, որոց մէջը՝ մէկքէն մինչեւ ծանկերը երկարազ լայն դրոպաներ կային : Ահաւասիկ պտնուած աւարկաներուն յուշակը :


52 մէթր մետաքս, բազմաթիւ կտրաններով . 2 կտոր ժանեակ . չորս տուփ petits fours . սլաքի զիտ մը . 3 կտոր երչիկ . 4 կտոր երչիկ . 2 հատ մետաքսե corsage . 2 տոպրակ սուրճ . 6 հատ փոքրիկ գաւաթ . 15 հաւկիթ . 7 կտոր Բարիզի ածուխ . 2 բիւրեղէ սինակ . արուակ մը ըմպելիք . արծաթէ շաքարի ունելի մը . 3 հատ խցան . 2 հատ փղոսկրէ ասղաման . և վերջապէս զոյգ մը հեծելանիւի պատուանդան

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՆԻ ՄԻՋՈՒԱԼ ԼԱՅՅ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՎ ԿԱՐԻՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 2 ՄԻԼԵՄ 563 ՄԻԼԻՄ Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները : Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵՄ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այնպէս որքիչ սրէ է ընկերութենէ մէկ միլեար աւելի է : Ս. ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկա. յաջողիչ ի Գաճիքէ

Ս Ի Ն Կ Ե Ր ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻՅԿ ԵՆԴԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԵՆԿԵՐ Պալաքի փողոց . Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գափէ Տը Լա Պուրի կից : Հին եՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԲԱՂԱՔԵՐՈՒՆ ՄԻՋ 6500 ՄԱՍԵԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Այնպէս թմենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներս են եւ առնցով՝ մինչեւ ցարչ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի միայնակներով եւ մեայնեղով փարսուրուած, երայնաւորն ալ մեքենաներ, ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է : ՀԱՐՈՒՍՏԵ ԲՐՈՒՍԻՈՑ ԿՍՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՐԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ Զրի գասեր և նորոգող թիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենանց յից համար, յաճախորդաց տուններուն մէջ : Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն հին մեքենանցից եւ նորագութիւն ամեն կարգի մեքենայից



ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 7 ԱՊՐԻԼ 1901

4785	5254	292	307	5133	1701
5544	2491	1573	7158	3650	3814
4397	6217	8977	4318	228	6587
2823	2857	4527	1292	3345	3653
		8173	5083	763	

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 7 ԱՊՐԻԼ 1901

8878	567	618	281	199	382
682	1623	2023	2122	2400	2527
2548	2560	2990	2802	2641	2687
3518	3943	3657	4022	4995	4677
5469	9405	9488	9544	7025	7712

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՏՈՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ Զ ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900 ԾԱՌԻԱ ԱՊՏԻԼ ԱՅԻՉԻ ՍԿԻՐԸ Օսմանի ղեկարանին դիմացի փողոցին մէջ : Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին : Այցեխարտեր, Երջարանակներ, Գիւճեր, Հրախրագրեր, Մանաքրներ, Տեղեկագրիւներ, Կանոնագրիւներ, Տուներ և այլ և այլ գրգարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը փաճառուին հետեւեալ գրքերից : 1. ԲՆԱՇԻԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ի Ա. և Բ. պրակներն 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս վերջոնք, արդիւնած է : 3. ՀՍՒԱՔԱՍՈՑ հայոց Ժողովրդական երգերու :